


Հ. Բ. ԱՐԱՍԱՐԵԱՆ

~8

ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ԽՆԴԻՐԸ



Ա.ՊԵՏԵՐԲՈՒՀՈԳ
ՊՈՏՎԿԻՆՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ԼԵՇՑՈՒԿՈՎ, ՓՈՂ. 4
1908

Բ. Բ. ԱՂԱՍԱՐԵԱՆ

1130-42

ԱԶԳԻ ԳՈՅՉՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ԽՆԴԻՐԸ

1. Կախաբան:
2. Գլխաւոր պայմանները ազգի դոյութեան և յարատեռթեան:
3. Կարևոր միջոցներ վերսկեալ նպատակի իրագործման համար:
4. Ազգի ունեոր և ինտելիգենտ գասակարգերի պարտականութիւնը:
5. Վերջաբան:



Ա. ՊԵՏԵՐՅԱՆ

ՊՈՏՎԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ. ԼԵՇՏՈՒԿՈՎ. ՓՈՒ. 4

1908

06 FEB 2013

76497

Il faut se multiplier.
Проф. МАРРЬ.

ԱԶԳԻ ԳՈՅՑՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԽՆԴԻՐԸ

I.

Հայ ազգը մի տարօրինակ պատմական առեղծուածէ, որը՝ չնալած դարաւոր սարսափելի հալածանքների, թէ իւր՝ աւելի զօրեղ դրացի ազգերի կողմանէ և թէ ահոելի՝ մոնղոլների, հոների, արաբների, հոռվմայեցոց և վերջապէս տաճիկների, մնացել է՝ թէ և շատ նուազ թւով, էլի կենդանի, իբրև ազգութիւն՝ պահելով իւր կրօնը, լեզուն և իւր ազգային առանձնայատկութիւնները: Իսկ՝ նորադրացի ազգութիւնները՝ միդիացիք, ասիրիացիք, բաբելոնացիք և այլն, անյետացել են, իբրև ազգութիւններ պատմութեան էջերից:

Յայտնի գրականագէտ և հայերէնագէտ իւրի Վեսելովսկին իւր վերջին աշխատութեան մէջ *) զրումէ, թէ ինչքան մեծ է ոռւսների հակահալկական տրամադրութիւնը և հայատեցութիւնը մինչև անզամ ինտելիգենտ գասակարգի մէջ. և նայդ բացատրումէ նորանով, որ օտարները՝ ի միջի ալոց՝ ոռւս հասարակութիւնը, չեն ձանաչում

հալին: „Բայց եթէ նորա աշխատէին ծանօթանալ այդ ազգի՝ թէ անցեալ և թէ ներկայ կեանքի հետ, չգատէին նորան՝ նորա ամենաչնչին ներկայացուցիչների բացասական յատկութիւնների հիման վերայ, պիտի տեսնէին, ինչպէս մենք բաւականաչափ ցոյց տուած ենք, թէ ինչ հետաքրքիր պատմական երեսիթ է ներկայացնում այդ փոքրիկ ցեղը հարիւրաւոր դարեր կուլտուրական օազիս կազմելով խաւար Ասիական աշխարհում:» Երբ ռուս ազգը կծանօթանալ հայ ազգին հետ,—զրումէ նոյն Վիսելովսկին,—այն ժամանակ նա չի կարող չվերաբերւել դէպի հայր բարեկամաբար. ռուս ինտելիգենցիան ձեռք կկարկառէ հայ ինտելիգենցիային“ և այն:

Իուս ազգը շատ հին ժամանակներից է սկսել ծանօթանալ հալին հետ, ինչպէս զրումէ յալտնի այժմ հանգուցեալ կ. Եղեանը իւր նշանաւոր աշխատութեան մէջ *). և ռուսի յարերեւութիւնը դէպի հայր՝ սկզբներում եղել է բարեկամական դրական, իսկ, վերջերում՝ թրքահայերի կոտորածների ժամանակ հակակրական, բացասական, ինչպէս այդ արդեն յալտնի է պաշտօնական գրութիւններից: Արպէսզի այդ վերջին հայալինաս ուղղութիւնը գոյութիւն չի ունենալ, իւրի Վեսելովսկին խորհուրդ է տալիս ծանօթացնել ռուս հասարակութեան հային հետ և նա այդ ուղղութեամբ դովելի եռանգով գործում է զրականական ասպա-

րէզում ծանօթացնելով ռուսին մեր կեանքի և գրականութեան հետ: Ահա ինչու խրախուսանաց և մեծ երախտագիտութեան արժանի են այնպիսի անձնաւորութիւնները, ինչպէս Վեսելովսկին, պրոֆ. Մարրը, Ամֆիտեատրով և այն, որոնք իրանց անաչառ և լուրջ աշխատութիւններով լուս են սփռում մեր ազգի՝ թէ անցեալ և թէ ներկայ կեանքի վերայ:

Ինչպէս յալանի է՝ նոյն ուղղութեամբ գործում են արտասահմանում մեր բազմաշխատ Արշակ Զօրանեանը, Մինաս Զերազը և այն գաղղիերէն լեզով հրատարակելով բազմաթիւ գրւաճներ մեր ազգի՝ թէ անցեալ և թէ ներկայ կեանքի մասին, գտնելով, որ Եւրոպան ևս շատ թերի և սխալ հասկացողութիւն ունի հայի մասին. և ահա 'ի միջի այլոց նորա անտարբերութեան պատճառը դէպի հայի սոսկալի զրութիւնը:

Եւելորդ չի լինիլ ալստեղ բերել մէկ քանի Եւրոպական հռչակաւոր անձանց կարծիքը հայ ազգի մասին.

Լամարտինը հայերին անուանում էր „Արևելեան Զուիցերացիներ.“ Զէմս-Բրայս, հռչակաւոր գրող, քաղաքագէտ և հայասէր, որը այժմ Անդղիայի դեսպան է Ամերիկայում, հայերին հաշում է «զօրեղ ցեղ՝ թէ գիղիքապէս և թէ մտաւորապէս»:

Անատոլ-Մրանս, ժամանակակից հռչակաւոր Գաղղիալի գրողը. «Հայերը Եւրոպալի ներկայացուցիչներ են Ասիայում, տաղանտաւոր կուլտուրական

*) Сношения Петра Великаго съ Армянами.

ցեղ. և Եւրոպան պիտի ճանաչէ նորան և գնահատէ:»

Հանճարաւոր բանաստեղծ՝ Բալըրնը այնքան յափշտակւած էր հայերի արժանաւորութիւններով, որ գնացել էր Վենետիկ և ոռվորում էր հայոց լեզուն:

Մի քիչ շեղւելով՝ յարդելի պատճառներով՝ մեր գրութեան բուն նիւթից, դառնանք հայ ազգի ամենակենսական բազմացման հալցին:

Վերոյիշեալ առեղծուածք՝ ասել է թէ հայի կենսունակութիւնը և զիմացկանութիւնը իւր դժոխք դառած բուն Երկրում, ներկայումս Տաճկաստանում, կարելի է բացարել զիսաւորապէս հային յատկանիշ ներքին զօրութեամբ, որը մի անգնահատելի գանձ է, արժանի փայփայման և պաշտպանութեան, որպէսզի նա աւելի ևս կաղդուրուի, զօրեղանայ և կարողանայ զիմանալ ներկայանաշող և ճնշող պայմաններին:

II.

Ամեն մէկ ազգութիւն, եթէ նա չի կազմում փոքր ի շատէ պատկառելի քանակութիւն, նա չի կարող պահպանել իւր գոլութիւնը. նա պիտի անխուսափեիօրէն անյետանայ պատմութեան էջերից:

Հին ազգերից միայն հրէաները և հայերը՝ չնայած սարսափելի պայմաններին, կարողացել են պահպանել իրանց գոյութիւնը, այն զանազանութեամբ միայն, որ հրէաները չեն կարողացել մնալ

բուն երկում՝ հայրենիքում և յրւել են զանազան կողմէր, մոռանալով իրանց լեզուն, բայց շատ ամուր պահելով իրանց հաւատը: Հրէան, չնորհիւ իւր բնածին ցեղական բեղմնաւորութեան չնայած շատ աննպաստ պայմանների, մնացել է քանակութեամբ մի նշանաւոր մեծութիւն, հասնելով 10 միլիոնի, որոնցից 5-ից աւելի մուսաստանում է գտնւում:

Հոռվմայեցոց հոչտկաւոր պատմաբան Տացիար իւր պատմութեան մէջ, խօսելով հրէաների մասին, յայտնում է յետագան. „Հրէաները հոգատար ևն իրանց ազգի բազմացման մասին. Երախայասպանութիւնը նրանց մօտ համարւում է յանցանք հաւատի դէմ:“ *)

Հայերը, գտնւելով համարեա հրէաների դրութեան մէջ, կարողացել են, բայց մեծի մասին, մնալ բուն Երկրում պահելով այն ամենը որը ազգի գոյութեան հիմունքներն են կազմում՝ հայրենի հող, լեզուն և կրօնը:

Իսկ հայութեան այն բեկորները, որոնք յրւել են օտար Երկիրներ, օրինակ Լեհաստան, Աւստրիա և այլն, թէ ձուլուել են տիրապետող ազգերի հետ և թէ պիտի ծուլւեն. և զիսաւորապէս անյետացել են այն հայերը, որոնք կրօնափոխ են եղել՝ թէ բրիստոնեայ և թէ մահմետական Երկրներում, մանաւանդ Տաճկաստանում, ուր կառավարութիւնը ձեռնարկել է վերջերս հայաշինչ քաղաքականութիւն: Նա աշխատում է մէծ եռան-

*) История Тацита, пер. Модестова, т. I. стр. 360.

դով ոչնչացնել հայ տարրը՝ թէ կրօնափոխ անելով նորան և թէ ուղղակի ֆիզիքապէս անյետացնելով, որպէս զի հայկական կոչւած հարցին վերջ դրւի ընդ միշտ և գորանով եւրոպական միշտամտութեան առիթը վերացւի:

Հայ ազգը երբէք ազատ չի եղել իւր պատմական կեանքում այդ տեսակ հալածանքներից: Յիշենք Շահ-Աբբասի ժամանակ հայերի բռնի դաղթը երեանալ կողմէրից, երբ լիշեալ շահը համարեա մաքրել էր այդ երկիրը հայերից, տանելով նորանց Պարսկաստան, ուր միայն չնշին մասն էր հասել — շատերը ճանապարհին մեռել անհետացել են: Նոյն ազգացինց քաղաքականութիւնը տեղի է ունեցել՝ ոչ հեռու ժամանակներում Աղուանք կոչւող Հայաստանի այն մասում, ուր բնակւում էին հայագաւան Ուդիացիք և զուտ հայեր — ներկայ Նուխաւի և Արէշու գաւառներում: Այստեղ ազգաբնակութեան գուցէ 90% բռնի հաւատափոխ են դարձւել մի ոմն Խան-Զալարի օրօք, մանաւանդ Տանկաց ժամանակ, երբ ով ոք չի կամեցել հաւատափոխ լինել, պիտի հատուցաներ մի տեսակ հարկ, որը կոչւում էր և այժմս էլ լիշւում՝ դինէփակի, նշանակում է հաւատի շերամաթել: Քրիստոնեալ մնացածները ներկայումս կազմում են մէկ քանի ուղիւական գիւղեր. Նիժ, Վարտաշէն և մէկ քանի աւելի փոքր գիւղեր, ուր բնակւում են հայ և մահմեղական ազգակիցներ: Բայց հաւատափոխները վազուց կորցրել են հաւատի հետ և լեզուն. և շատերը մեզ խոստովա-

նում էին, որ նրանց նախնիքը հայ են եղել: Սրանց մէջ մնացել են՝ բացի վանքերից, ուր այժմ ևս ուխտ են գնում, գիւղատեղերից, գերեզմանատներից և միւս աւերակներից, մէկ քանի քրիստոնէական սովորութիւններ, օրինակ՝ խաչ բաշել հունցի վերայ և ալին: Կարծեմ՝ սրանց մասին էր զրում հանգուցեալ Գ. Արծրունին՝ հայ մահամետական կոչելով նորանց:

Պատմական յախնի փաստ է, որ հայերից միայն նրանք են մնացել հայ, որոնք չեն կորցրել հաւատը, ինչպէս տեսնում ենք թէ քրիստոնեայ և թէ մահմետական երկրներում: Օրինակ՝ միայն Լեհաստանում, ուր Անիից գաղթել են 200,000 հայ և սոցանից կրօնափոխ լինելուց իւտոյ համարեա ոչինչ չի մնացել. բայց կան տեղեր, ուր թէև լեզուն կորել է, բայց՝ շնորհիւ հաւատի մնացել է հայութիւնը. Վրաստանում, Պարսկաստան և Տաճկաստանում:

Ուսւ ազգի յախնի գիտնական և ներկայումս լիդեր կազետների՝ Միլիւկովը իւր նշանաւոր աշխատառութեան մէջ զրում է *).

...«Ինչ որ ասացինք լեզվի կարեսորութեան մասին, նոյնը ասելու է և հաւատի . . . Նրանք, որոնք ասզրել են Բալկանեան թերակղզում, կվկայեն, թէ ի՞նչ ահազին նշանակութիւն ունի հաւատը այն քրիստոնեայ շրջաններում (օնդութեան) որոնք գտնում են տաճկաց տիրապետութեան տակ. և թէ

*) Очерки по истории русской культуры. Томъ III, երես 8.

ինչքան նոյն ազգաբնակութիւնը անտարբեր է լի-
նում գէպի հաւատաք, երբ նա ստանում է ազգային
անկախութիւն։ Այդ բացարւում է նորանով, որ
հաւատը գնահատում է ոչ թէ բատ էութեան,
այլ իբրև սիմվոլ առանձնայատկացման (օճօօն-
լենու) նոյն հաւատի ազգաբնակութեան։ Հա-
ւատի սոցիալական գերը այդ գէպըում կարող է
լինել ահաղին, իսկ դաւանաբանականը չնչին։

Ահա ինչու գատապարտէլի են այն անծինք և
կուսակցութիւնք, որոնք, մեր ներկայ պայմաննե-
րում, բարողում են անկրօնութիւն, ինչ որ եկեղե-
ցու բաժանում և առհասարակ թուլացնում են
հայի կրօնական զգացմունքը, որը ահազին վնաս-
ներ կարող է հասցնել ազգի ամբողջութեան, դոյու-
թեան և աւելի ևս քանակի նուազման։

Նոյն Միւլիւկովը վերոլիշետլ շաբագրութեան
մէջ ահազին նշանակութիւն է տալիս ազգի քա-
նակին, որից կախուած է նորա, թէ քաղաքական
և թէ նիւթական ոլոք, բերելով յետագայ հետա-
քրքիր ստատիստիկան։

« Ոուսները Մեծն Պետրոսի ժամանակ եւրո-
պական ազգաբնակութեան (այն ժամանակ 130 մի-
լիոն) $\frac{1}{10}$ էին կազմում, իսկ այժմ նոյն ազգաբնա-
կութեան (Եւրոպական ազգաբնակութեան ներկալ
թիւր — 338 միլ.) մէկ երրորդ մասն են կազ-
մում. և այդ աճումը եղել է շատ արագ։

1724 թուին — 13 միլիոն.

1796 » — 36 »

1815 » — 45 »

1851 » — 67 միլիոն.
1897 » — 129 (սոցանից իսկա-
կան ոուսներ 84 միլիոն):

Նոյնպիսի մեծ աճում չի նկատում եւրո-
պական ազգերի մէջ. Գաղղիայում Մ. Պետրոսի ժա-
մանակ եղել է 19 միլիոն, իսկ այժմ 39 միլիոն.
Աւստրիայում 12—13 միլիոնից հասել է 45,5 միլ.
Անգլիայում 8,9 — 40,4 միլ. Գերմանիայում այ-
ժմ հաշւում է 62 միլիոն։ Գաղղիայում, ինչպէս
երեսում է պաշտօնական ազբիւրից, նախանցեալ
1906 թուին աճումը ազգաբնակութեան եղել է
ընդամենը 26,000, իսկ Գերմանիայում 800,000,
Ռուսաստանում — 2 միլիոն։

Հայերի թիւր Ոուսաստանում՝ մօտաւորա-
պէս հաշւում է 1,5 միլիոն, որոնցից՝ համարեա
90% ապրում է Կովկասում զիստարապէս իւր
բուն երկրում։ Մահմեդականները ամբողջ Ոուսաս-
տանում հաշւում են 14 միլիոն, իսկ Կովկասում,
եթէ չհաշւել լեռնականներին — լեզգիներին, չեր-
քեղներին և այլն 2,5 միլիոն. վրացիք — 1,5 մի-
լիոն։ Իսկ թէ ինչքան հայ կայ Տաճկահայստա-
նում, այդ յայտնի չէ. բայց, ի հարկէ, նորա թիւր
այժմ բաւականին նուազել է մեծ կոտորածներից
յետով. և, գժրախտաբար, օրբսորէ տաճկահայի
քանակութիւնը իւր բուն երկրում քիչանում է՝
շնորհիւ տաճկաց ըեժիմի ճնշումների և իբրև դո-
րա հետեւանք՝ գաղթականութիւն գէպի զանազան
երկիրներ՝ Ամերիկա, Կովկաս և այլն։

Ինչպէս վերև յայտնեցինք, ոուսների աճման

աստիճանը նախանցեալ՝ 1906 թուին հասել է 2 միլիոնի. ահա այն մեծ ոյժը, որը նա պիտի ստանայ, իբրև մի ահազին քաղաքական ֆակտոր պատմութեան մէջ:

Իրուսաց մեծ աճումը պ. Միւլիւկովը բացատրում է պսակների և երեխաների ծննդեան մեծ տոկոսով, չնայած վերջնաերի մահացութեան մեծ թւին՝ համեմատած երրոգական ազգերի հետ Բայց և այնպէս՝ ռուսաց աճման տոկոսը հասնում է $1,3^{\circ}/_0$ — $1,7^{\circ}/_0$, մինչդեռ նոյն տոկոսը աճման եւրոպայում, մանաւանդ՝ Գաղղիայում, շատ չնչին է:

Բաղմաթիւ երեխաների ծննդեան, ասել է թէ մեծ բերմնաւորութեան կենսաբանական (ՅՈԼՈ-ԳԻՎԵՐ.) պատճառը անհատի ստոր զարգացումն է. ինչքան անհատը մտաւորապէս զարգացած է, նոյնքան թոյլ է նորա բեղմնաւորութեան ընդունակութիւնը: Կան, ի հարկէ, և ուրիշ ընդհանուր սոցիալական պատճառներ, նա մանաւանդ «Նոր Մալուղեան» կոչող, երբ մարդիկ երկու սեռի՝ չեն կամենում թէ ամուսնանալ և թէ մանաւանդ ծանրաբեռնել իրանց շատ երեխաներով: Այդ ուղղութիւնը մանաւանդ տարածւած է Գաղղիայում, ուր աղքարնակութեան կորստեան վտանգ է սպառնում: Նոյն վտանգը սկսել է տարածւել և միւս լուսաւոր երկրներում, մանաւանդ քաղաքներում, ինտելիգենտ և բուրժուա գասակարգերի մէջ, վարակելով և մեզ հայերիս մեծ քաղաքներում,

ուր պսակը այդ դասակարգերի մէջ օրբստօրէ պակասում է:

Եթէ առաջներում հայերիս մէջ անպսակ լինելը մի տարօրինակ և մինչեւ անգամ պախարակելի բան էր երեւում, այժմ դորա հակառակն է նկատում վերոյիշեալ դասակարգի մէջ, օրինակ՝ Տփխիս և Բագու:

Յաւալին այն է, որ ամուսնական կեանքից փախչում են ոչ թէնրանք, որոնք նիւթական անպատճութեան պատճառաւ դժուարանում են ամուսնական ծանր պարտականութեան տակ մտնել, այլ աւելի ապահովները նիւթականի կողմանէ:

Բարեխախտաբար՝ մեր ազգի միւս դասակարգերը՝ զիւղացիք, արհեստաւորները, մշակները և մանր առևտրականները չեն վարակւած անպսակիներու ախտով: Հազիւ թէ մեր զիւղական հասարակութեան մէջ կարելի լինի գտնել անպսակութեան դէպքեր: Եւ եթէ մեր ազգը աճում է, դա վերոյիշեալ տարրերի շնորհիւ է, դոնեայ այժմ, մասնաւանդ որ հայերը՝ հրէաների նման օժտւած են բնածին բեղմնաւորութեան մեծ ընդունակութեամբ, այլապէս զժուար է երեակայել, որ նա կարողապիտ դժուար է տարածեալ այն դժոխքի մէջ, որի նաև դոյութիւն ունենալ այն դժոխքի մէջ, որի մէջ նա ապրել է և այժմ էլ ապրում է, այն է Տանկաստանում:

Ներկայումս՝ մեր ազգի բաղմացման դրութիւնը Տանկաստանում աւելի քան օրհնասական, կրթիչական է երկրի հայացինց բեժիմի շնորհիւ. իսկ միւս կողմերում օրինակ կովկասում՝ հայր ապատ

է յիշեալ վտանգից, բայց նա՝ շնորհիւ իւր տղի-
տութեան և մեծ աղքատութեան նոյնպէս անկա-
րող է բազմանալ և յառաջ գնալ։ Նշանակում է
հայր ամեն տեղ կարօտ է հոգատարութեան՝ զանա-
զան աստիճանի։

Վերջին հայ-թրքական անմիտ ընդհարումը
ունեցաւ թէ դրական և թէ իւր բացասական
կողմերը։ Արհամարհւած, վախկոտ կոչւող հայր
ցոյց տուեց, որ նորա մէջ արիութիւնը չի կորած,
որ նա հարկաւոր դէպքերում դիտէ և կարող է
իրան պաշտպանել մեծ արիութեամբ։ Վախկոտ
խօսքը ընդ միշտ վերացւած պիտի համարած հայի
անունից, ինչպէս այդ ընդհանրացած կարծիք էր
թէ մեր դրացիների, թէ օտար և թէ տիրապետող
ազգի մէջ մինչև վերջին ընդհարումը։ Ինչ որ հայր
ցոյց տուեց իւր ինքնապաշտպանութեան գործում,
դա ապացուց էր, որ նա՝ թէ և երկար ժամանակ
զուրկ էր զէնք կրելու իրաւունքից և սովորութիւ-
նից, ինչպէս այժմ Տաճկաստանում, բայց էլի նա չի
կորցրէլ մարդկացին արժանաւորութիւններից ամե-
նաբնահատելին՝ արիաբար և ինքնազոհաբար պաշտ-
պանել իւր գոյութիւնը, պատիւր, գոյքը և ալլ։

Բացասական կողմը ընդհարման ահազին նիւ-
թական վնասն է, որը ծգել է հային մեծ աղքա-
տութեան մէջ այն շրջաններում, ուր եղել է ընդհա-
րում, ուր վերջինը ստացւալազալին բնաւորութիւն.
Երկու կողմի կուողների համար ամեն մէկ անդամ
հակառակ կողմի համարում էր թշնամի։ Սնի-
ծենք այդ անձիս կոխուր, նորա պատճառները և

աշխատենք համերաշխ ապրել մեր դրացիների հետ
մեր ընդհանուր հայրենիքում։ Այդ է պահանջում
մեր բոլորիս օգուտար»

Այստեղ մեծաւ ուրախութեամբ պիտի յիշենք
այն բարի խորհուրդները, որոնք տպել էր յայտնի
պրոֆ. Մարրը Ռազբեյ լրագրում յետագայ վեր-
նագրով։ Պիսմա կъ кавказской молодежи,ուր բա-
րողում էր հայերին, վրացիներին և թուրքերին
համերաշխ և սիրով ապրել միմիանց հետ։ իսկ
հայերիս մի շատ խորիմաստ խորհուրդ՝ բազմանալ՝
գործածելով Փրանսերէն յետագայ խօսքերը։ Il faut
se multiplier.

Ահա մի մեծ կենսական հայց, որ գրել է մեր
առաջ յայտնի գիտնական Մարրը, դորանով ցոյց
տալով, թէ ինչքան լրջօրէն է ըմբռնել նա մեր
ազգի գոյութեան և ապագայի մեծ խնդիրը։

Նա շատ լաւ է հասկացել, ինչպէս Միւլիւկովը,
որ ամեն ազգի գոյութեան գրաւականը զիխաւո-
րապէս նորա քանակութիւն է։

Ուստաստանը 150 տարւայ ժամանակամիջո-
ցում չնչին թւից 13 միլիոնից հասել է 130 միլիոնի
և գորանով ստացել այն զօրութիւնը, որը՝ չնայած
ուսւ-ճապոնական անխաչող պատերազմի՝ նա ունի՝
թէ եւրոպայում և թէ ուրիշ երկներում։ իսկ
Դաղղիան չ'նայած նորա ամենամեծ կուլտուրայի
վտանգի մէջ է, որովհետեւ չի բազմանում և իհարկ
վտանգի մէջ է, որովհետեւ չի բազմանում և իհարկ
է եթէ այդպէս շարունակւի, նա պիտի, շնորհիւ
իւր նուազ քանակի, երկրորդական գեր խաղայ
միշաղգային հարցերում։

Մենք ևս այդ հանգամանքը՝ ի նկատի առնելով, մինխատուր կերպիւ պիտի աշխատենք, որ մեր աղջը նախ և առաջ բազմանայ, ինչպէս խորհուրդ է աալիս հայի անկեղծ, հեռատես և լուրջ բարեկամ պրոֆ. Մարրը. այլապէս՝ ինչքան մենք կուրառուրապէս զարգացած լինինք և նիւթականապէս ապահով, գաղղիալի պէս փտանդի մէջ պիտի գտնվինք։ Մենք պիտի աշխատենք, որ բուն երկրում պատկառելի թիւ կազմենք, որի երկիւղից Տաճկաց կառավարութիւնը ձգտում է պակասացնել հայի թիւր, որպէսզի հայկական հարցին վերջ դնելի առ ՚ի չգոյէ մեծաքանակ հայի բուն երկրում։

Գաղղիալի նշանաւոր, զիտնականները, քաղաքադէանները և կառավարութիւնը մտահող են, թէ ինչպիսի միջոցներ հնարեն, որ աղջաբնակութիւնը բազմանայ, մանաւանդ որ նորա ախոյեան Գերմանիան Գաղղիալից 20 միլիոնով աւելացել է, նշանակում է և այլքանով նա աւելի ուժեղացել է։ Ահա ինչու Գաղղիալի ուտոպիստներին և հակաղինորականներին (антимилитаристы) հոչակաւոր առաջին նախարար Կլեմանսօն պատասխաննել էր. Avant de philosophier il faut de vivre. Ասել է թէ մենք մի այնպիսի դրութեան մէջ ենք գտնւում, որ պիտի մտածենք մեր դոլութեան համար նախ և առաջ, քանի որ նւազ ենք մեր ախոյեանից։ Նոյն պատասխանը տալու է և մեր ողեորւող երիտասարդներին, որոնք՝ մոռացած մեր աղջային իրական պայմանները, մեծ մեծ համամարդկային հարցերով են ողեորւում...»

Գաղղիալով անզօր գտնւելով նոր-մալտուղեան վնասակար և ազգաշինչ հոսանքին դէմ, *) աշխատում են գոնեալ մահացութիւնը պակասացնել և դորա համար հիմնում են բազմաթիւ բնկերութիւններ. ապաստարաններ, մսուրներ (ЯСЛИ), ընկերութիւններ կաթնի բաշխման- Goutte du lait, տարափոխիկ և վեներական հիւանդութիւնների դէմ, առողջապահական և տարրական բժշկական գիտելիքների տարածումը ժողովրդի ամեն խաւերում և վերջապէս օժանդակութիւն բազմաթիւ երախայունցող ընտանիքների և ալլն. Բայց՝ դժբախտաբար՝ այդ բոլորը առայժմ ցանկալի հետևանք չի ցոյց տուել. գուցէ բարոյական ազգեցութեամբ, դիմելով ազգասիրութեան զգացմունքին, կարելի լինի թուլացնել նոր-մալտուղեան հոսանքը։

Այլ է մեր պայմանները. մեր աղջի ահազին մեծամասնութիւնը՝ բարեբախտաբար՝ լուսաւորեալ ազգերի կուլտուրալի բացասական կողմից ազատ է. նա գտնւում է զեռ նահապետական լրութեան մէջ. ընտանեսէր, երախայասէր և օժտւած է բեղմէջ. ընտանեսէր, ինչպէս այդ մանաւորական մեծ ընդունակութեամբ, ինչպէս այդ նկատելի է մանաւանդ գիւղորայքում, ուր 10—20 երախաններ ունեցողները շատ բազմաթիւ են։

III. Ա. Խ. Հ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ո՞րպիսի միջոցներ են հայրեաորդ բազի առջեցութեամբ մացման համար։

*) Նորա մասին գրւած է Հոչակաւոր առաջարկ մաւորութիւն» վիպասանութեան մէջ,

Երկու տեսակ՝ նիւթական և մտաւոր-կուլտուրական, որոնցից զլիաւորները յետագաներն են.

1. Տալ գիւղացուն հող և ջուր, որոնցից շատ տեղերում նա զուրկ է: Կան շատ աեղեր մեզ յախտնի, ուր գիւղացին իւր աշխատանքի կեսը տալիս է հողատիրոջ կան շատ աեղեր, ուր՝ ոչ թէ դաշտերը ոռոգելու, այլ խմելու բաւականաչափ ջուր չկայ, օրինակ Արեշու գաւառի հայկական շրջանում, ուր կանանց սեռը օր ու գիշեր ջուր կրելով է զբաղւած: Ուրեմն նախ և առաջ գիւղացուն տալ հող և ջուր, որ նա կարողանայ առանց գաղթականութեան իւր ապրուստը ունենալ բուն երկրում:

2. Տալ գիւղացուն գիտութիւն իւր եղած հողից և ջրից աւելի արդիւնք ստանալ. նշանակում է տարածել նորա մէջ ուսման հետ գիւղատնտեսական զիտելիք՝ բանալով ուսումնարանների կից մասնագիտական ճիւղեր, ինչպէս այդ մտցրւած է մէկ քանի արքունական ուսումնարաններում, օրինակ Ղազախ քաղաքում, Աղդաշում և այլն:

3. Իսկ այն վայրերում, ուր կլիմայական պայմանները և երկարատև յուրա ձմեռները գիւղատնտեսութեան համար արգելը են հանդիսանալում, բանալ արհեստագիտական ճիւղեր ուսումնարաններում:

4. Բանալ տնախնագործական զանազան արհեստանոցներ՝ թէ մեծերի և թէ փոքրերի համար, ինչպէս այդ լայն ծաւալով տարածւած է Ռուսաստանում, որի վառաւոր ապացույցը երևաց այս օրերս «Տնախնագործական ցուցահանդէսում Պետեր-

բուրգ», ուր ցոյց էին զբւած բազմազան գործւածքներ և ուրիշ իրեղէններ, որոնց պահանջը՝ թէ այստեղ և թէ արտասահմանում շատ մեծ է *):

5. Բանալ գիւղական հիւանդանոցներ, որոնցից համարեա զուրկ է մեր գիւղացին: Ներկայումս, ինչպէս յախտնի է, ամեն մէկ գաւառում կայ մէկ հիւանդանոց, որից կարողանում է օգտւել միմիայն մօտիկ գիւղացին. մինչ Ռուսաստանում ամեն մէկ գաւառում տասնեակ հիւանդանոցներ կան: Բայց չպիտի կարծել, որ մեր գիւղացին, հեռու լինելով հիւանդանոցներից և ուսեալ բժիշկներից, բժշկութեան վերայ շատ մեծ ծախս չունի զանազան ինքնակոչ հարքիմների, դալլաքների, տատերների և երբեմն խաշնարածների (երեխամնութեան ժամանակ, երբ կարեոր է լինում օպերացիա, գիմում են վերշիններին) վարձատրութեան համար: Եւ գոյանից շատերը իրանց տղիտութեամբ մեծամեծ ցանից շատերը իրանց տղիտութեամբ մեծամեծ ցանից հասցնում հիւանդներին, ինչպէս բավասաներ են հասցնում հիւանդներին, ինչպէս բանիցս մենք տեսած ենք:

Մեր գիւղորայքում ահագին մահացութեան պատճառներից շատերը բժշկա-առողջապահական օդնութեան բացակալութիւնից է. մարդիկ հիւանդանում, մեռնում են երբեմն չնչին հիւանդութիւններից: Կանանց այն դժբախտ մասը, որը երեխայ հասկում (12—13 ամարիքում) ծնողաց տղիտութեան և քահանաներից շատերի ազահութեան և մասամբ էլ նոյնպէս տղիտութեան, պատճառաւ ամուսնու-

*) Տես «ՊԵՎ» № 26/1907.

նումէ՝ ծննդաբերութեան ժամանակ, կամ անժամանակ վախճանումէ, կամ, ստանալով կանանց հիւանդութիւններ, երբեմն անդամալոյծ է զառնում. շատերը՝ չբերք և առհասարակ անընդունակ ամուսնական կեանքի համար: Եւ այդ երեխայ ամուսինները, երբ այդպէս վնասում են, նորանց կոպիտ և անկիրթ ամուսինները ուղարկում են «հէրանց տուն», ուր, կարծես ծնողաց մեղքի համար, նոքա տանջում և մեռնում են: Հասկանալի է, որ այդպիսի երեխայ ամուսինները չեն կարող տալ առողջ սերունդ. Նրանց երեխաները լինում են թուլ, փոքրիկ, միով բանիւ՝ ալլասեռ սերունդ, և թարկող մեծ մահացութեան:

Վերոլիշեալ գէպքերը զիւղացու ընտանեկան կեանքի խանդարման, քայլաման և անբարոյականացման պատճառ են զառնում. հիւանդ կինը անընդունակ է զառնում իւր ամուսնական պարտականութիւնը կատարելու, երեխայ ունենալու, որը զիւղացու մօտ անհրաժեշտ պահանջ է համար-ւում:

Ի գէպ՝ պիտի աւելացրած, որ երիտասարդ քահանաների ամուսնաղբկութիւնը, քանի որ նորանք չեն կարող կրկին ամուսնանալ, նոյնպէս զիւղի անբարոյականացման պատճառներին պիտի վերադրած: Այդ վաղուց հասունացած հարցը՝ քահանաներին թուլ տալ կրկին ամուսնանալու, անյապաղ վճռելու է զրահիանապէս, ևթէ չենք կամ մենում ապօրինի կին ունենալը զիւղորակքում սովո-

րութիւն գառնայ և բարոյականութիւնը ընտանիքների մէջ հարւածւի:

Երեխայոց ահազին մահացութիւնը բացատրում է թէ վերոլիշեալ անչափահաս մայրերի տղիտութեան պատճառաւ, թէ սերունդի թուլութեան, ինչպէս վերև լիշեցինք, թէ զանազան տարափոխիկ հիւանդութիւնների՝ ծաղկի, քութէշի, կարմրուկի, գիֆտերիտի և այն. Էլ չեմ խօսում ստամոքսի և աղիքների խանդարումների մասին, որոնք այնքան տարածւած են զիւղական հասարակութեան մէջ, մանաւանդ ամառ ժամանակ: Եւ այդ հիւանդութիւններից ահազին թւով մանուկներ են վախճանում, քանի որ թէ բժշկութիւն չ'կայ և թէ հարկաւոր հասկացողութիւն ծնողների կողմանէ, վերջինների խորին տգիտութեան պատճառաւ:

Իսկ եթէ 'ի նկատի ունենանք, որ արդէն շնորհիւ մշակների, զինուրական ձառայութիւնից վերադրողների և վերջապէս քաղաքները յաճախող զիւղացիների՝ սկսել են տարածւել զիւղորականում այն սարսափելի ալլասեռող հիւանդութիւնները՝ սիֆիլիս, սուսունակ, որոնք այժմ կանանց հիւանդութիւնների և չբերքութեան զիսաւոր հիւանդութիւնների համարում, այն ժամանակ հասպատճառներն են համարում, այն ժամանակ հասկանալի կ'լինի, թէ ինչքան մեծ է մեր զիւղական կանալի կ'լինի, թէ ինչքան մեծ է մեր զիւղական պիտի հասարակութեան հասանելիք վտանգը, որը տգէտ հասարակութեան հասանելիք վտանգը, որը պիտի խորտակէ աղջի արմատը — զիւղական պիտի խորտակէ աղջի արմատը — զիւղական անումը և նորա ապագան:

Այդ բոլորից պարզ է, թէ ինչքան կարեոր և անյետածգելի պահանջ կալ մեր առաջ՝ տալ գիւղացուն Հնարաւորութիւն օգտւել բժշկական օդնութիւնից լայն ծաւալով, մանաւանդ որ սիֆիլիսը և սուսունակը առանց այդ օգնութեան պիտի տարածւեն առանց որեիցէ արգելքի՝ շնորհիւ գիւղացու ներկայ պայմաններին և նոցա նիստ ու կացին:

Բժշկական մարմինը իւր երկու սեռի բժիշկներով, Փելղերներով, մանկաբարձուհիներով՝ զիւղական շրջաններում, ինչ կասկած, որ աշագին և կուլտուրական նշանակութիւն կունենայ, իրքն կենդանի միջոց առողջա-բժշկական գիտելիք առածող ժողովրդի լայն խաւերում. և դորանով, 'ի հարկէ, Կ'բարձրանայ աղջաբնակութեան ածման տոկոսը. ժողովրդը աղատւած կլինի շատ չարեներից և նիւթական վնասներից:

Գիւղացին՝ տեսնելով և փորձելով զիտութեան առաւելութիւնը, լայն ասպարէզ կբանալ մեր ինտելիգենցիայի առաջ, պահանջ կզգայ դէպի նա, որից դեռ խուսափում է իւր տղիտութեան պատճառաւ. այդպիսով աւելի սերտ կապ կհաստատի զիւղացու և ուսում առածների մէջ, որը այնքան կարեոր է երկու կողմէրի համար:

Մէնք շատ երկար կանգնեցինք գիւղացուն բժշկական օգնութիւն հասցնելու մասին, որովհետեւ ես՝ ինքս երկար տարիներ իմ պաշտօնավարութեան ժամանակ անձամբ իմացել եմ, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի այդ օգնութիւնը գիւ-

ղական աղջաբնակութեան համար, որը չարաչար տուժում է նորա բայցակայութիւնից: Հենց այժմ մեր լրագրները ամեն օր գրում են զանազան տարափոխիկ հիւանդութիւններից պատահող զոհերի մասին, մանաւանդ ծաղկից — միայն կողբում, երեան. նահանդում 300 երեխայի կորուստ է եղել:

6. Ինչ արած այն կորստաբեր հոսանքի դէմ — գաղթականութեան, որը վերջերումս մէծ ծաւալ է ստացել բուն երկրից: Թէ ինչ աւերիչ երեսյթ է գաղթականութիւնը աղջային տեսակէտից, դա միթէ կարօտ է բացատրութեան: Հայ գաղթականները ուր որ գնացել են, մանաւանդ աւելի կուլտուրական երկիրներ՝ թէ կորել են, ալսինքն ծովլել են և թէ պիտի կորչեն իբրև հայ. իսկ դա մեզ պէս փոքրիկ աղջութեան համար մահ է: Միթէ լիշեցնենք այն մէծ գաղթականութեան մասին Լեհաստան, ուր 300,000 հայերից ոչինչ չվագել, մանաւանդ երբ կրօնափոխ են դարձրել նրանց:

Ոչ պակաս աղէտալի է պանդխառութիւնը, որի մասին «Կովկասեան Առաւոտ»-ի № 25, 1907 թ. կար մի գեղեցիկ յօդւած յետագայ վերնագրով՝ «Պանդխառող գիւղացիութիւն», ուր յօդւածաղիրը շատ ճիշտ լուսաբանել է, որ պանդխառութեան պատճառը մասամբ՝ ինքը գիւղացին է, որը մոռապատճառը մասամբ՝ ինքը գիւղական զբաղմունքը, վանալով յանախ իւր գիւղական զբաղմունքը, վազում է հարստանալու աենչով քաղաքները. բայց գում է հարստանալու աենչով քաղաքները. բայց շատերը, փոխանակ հարստանալու, յետ են դառ-

նում գիւղը քայլայուած առողջութիւնով, վարակւած սարսափելի հիւանդութիւններով, պատուհաս դառնալով թէ իւր ընտանեաց և թէ հասարակութեան համար վարակման աղբիւր դառնալով:

Թէ ինչ բան է գաղթականութիւնը աղզի գոյութեան տեսակէաից, թէ ինչ ահազին կենսական նշանակութիւն ունի սեպհական մայր երկիրը, այդ նոր են սկսում զգալ հրէաները, որոնք ցըրւելով զանազան երկիրներ, կորցրել են իրանց լեզուն, մնալով միայն կրօնով հրէայ (եթէ այդ վերջինը ևս չլինէր, նորա վաղուց ձուլած կլինէին ուրիշ ազգերի հետ): Ինչպէս յալտնի է, հրէաների մէջ այժմ կազմել է մի պատկառելի աղքային ճոխ ընկերութիւն, որը կոչւում է «սիօնիզմ», որի նպատակն է յետ գաղթացնել հրէաներին իրանց հայրենիք — Պաղեստին: Այդ ընկերութեան զըլիստոր հիմնադիրներն են՝ Գերցը — այժմ վախճանւած, և յալտնի գրող Նոր-Դաու: Սիօնիզմը բաւականին մեծ կուսակցութիւն է. նա ունի առանձին բանի, ուր առատօրէն ձգում են իրանց լուման հրէաները: Հրէաների վերադարձը բուն երկիրը ընթանում է յաջող: Թող սոցա այդ օրինակը կիրականութեան աղդաշինչ ախտից, եթէ չենք կամենում հրէաների օրը ընկնել դառնալով առանց սեպհական հողի, լեզուի՝ մի տարօրինակ պարագիտ տարը, որին պիտի հալածեն, անարդեն, ինչպէս անում են հրէաների հետ:

Նոյն սեպհական հողից զրկւելու տագնապի

մէջ է գտնւում լեհական կուլառուրական ազգի այն մասը, որը գտնւում է իւր նախկին բուն երկրում՝ Պրուսիայում, անհաւասար կռիւ մղելով Գերմանական հակամարդկային լեհաշինչ քաղաքականութեան դէմ: Բայց լեհացին այնքան ինքնանանաչ է, կուլտուրական, վասնորոյ և զօրեղ, որ նա հեշտութեամբ չի կարող ոչնչանալ. նա զօրեղաբար կմաքառէ, որովհետեւ ազգի բոլոր դասակարգերը՝ սկսած բարձր, հարուստ և ինտելիգենտ մասից մինչև վերջին շինականը, դործում են համերաշխ, միաբան ոյժով: Գերմանիան անում է տմարդորէն այն, ինչ որ անում է բարբարոս Տաճկաց կառավարութիւնը իւր հայ հպատակների հետ: Մեծ ամօթ լուսաւորեալ Գերմանիային, որը՝ փոխանակ Անգղիային, Գաղղիային հետեւելու, հետեւում է մի բռնակալ տէրութեան:

Եթէ գաղթականութեան դէմ ներկայ պայմաններում մաքառելի դժուար է, նոյնը չի կարելի ասել պանդխտութեան դէմ: Հարկաւոր է զիւղացուն տալ միջոց, ինչպէս վերև լիշեցինք, հայթայթել իւր ապրուստը բուն երկրում, նշանակում է՝ ունենալ բաւականաչափ հող, չուր և զիւտութիւն աւելի առատօրէն օգտելու իւր ունեցած հողից:

Հարկաւոր է բանալ զիւղացուց մօտիկ շրջան-ներում գործարաններ, ուր նա կարողանայ, ազատ ժամանակը, մշակութիւն անել, ինչպէս այդ տեղի ունի, օրինակ, Սիւնեաց երկրում՝ պղնձահանքե-

ըռում, մանաւանդ յայտնի բարեգործ Աղ. Մելիք-Ազարեանցի հանքերում:

Դժբախտաբար՝ մեր երկրի շատ տեղերում թագնւած հարստութիւնները մնում են առանց շահագործելու. և եթէ շահագործում են՝ ըստ մեծի մասին օտարների ծեռքով, որոնք, բնականաբար, գերադասութիւն են տալիս աշխատութեան մէջ իրանց համազդիններին: Ուր են շաքարի, բամբակի, սպիրտի գործարանները և այլն, որոնց համար այնքան հարուստ են Երևանայ և Գանձակի նահանգները:

Ահա այդ ասպարէզում մեր հարուստները կարող էին մի մեծ հասարակօգուտ գործ տեսնել, թէ կաղծէին բաժնետիրական ընկերութիւններ և շահագործէին մեր երկրի հարստութիւնները. դորանով թէ իրանք կ'շահէին և թէ երկրի բնակիչները, որոնցից շատերը՝ գործ վիճելու պատճառաւ՝ պանդխտում են զանազան հեռու երկիրներ: Այսուեղ վերոցիշեալ ծեռնարկութիւնները՝ բայց նիւթական օժանդակութիւնից դիւզացուն, կունենան և կուլտուրական ահագին նշանակութիւն երկրի համար: Անտարակոյս այդ հիմնարկութիւնները մասսմբ օժանդակող կ'լինին այն պատկառելի «Հայոց կուլտուրական Ընկերութեան», որի նպատակը այնքան համակրելի է ամեն որացաւ և լուրջ մտածող հայի համար:

Թող մեր հարուստները իրանց փառասիրութիւնը որոնեն իրանց կարեկցութեան արժանի պղղի մէջ. այսուղ միայն կարող են նոքա փառ-

տակել թէ մեծ յարգանք, թէ անմահ անուն և թէ յաւիտենական օրհնանք: Բարեբախտաբար՝ մեր ազգը այնքան էլ աղքատ չի ազգասէր և մեծագործ անհատներսվ: Բաւական է լիշել անմահ Լազարեանների տոհմը, որը իւր Լազարեան ձեմարանով և աշաղին եկեղեցական կալւածներով, տարեկան 200,000 մանէթ եկամուտով և շինած եկեղեցիներով, անմոռանալի յիշատակ է թողել հայոց նորագոյն պատմութեան մէջ:

Երախտազիտութեան արժանի են և միւս՝ ազգային ասպարէզում գործած և գործող մեր ազգայինները, որոնց թէ կենսազրութիւնները և թէ արած նւիրաբերութիւնները և առհասարակ ազգօգուտ գործերը ցանկալի է երատարակել ծեռնհաս զրողների ծեռօքը: Լազարեան տոհմի կենսազրութիւնը զրել է զրաբառ լեզով հանգուցեալ Մսերը, որը՝ ի հարկէ անձանօթ է և անմատչելի շատերին:

IV.

Մենք սւնինք երկու տեսակ բարեգործներ կան այնպիսի, որոնք ազգի համար են մտածում, իսկ կան այնպիսիք որոնք մեծ գումարներ են ծախսում ընդհանրութեան օգտին, թէ հիւանդանոց և թէ ուսումնարանների շէնք կառուցանելով: Ի հարկէ, ոչ ոք չի կարող առարկել առհասարակ բարեգործութեան դէմ, բայց՝ երբ մեր ազգը աւելի քան դժբախտ է և կարօտ իւր ունեոր զաւակների

օդնութեան և հոգատարութեան, միանգամայն բնական է, որ մենք՝ նախ և առաջ՝ մեզ համար մտածենք, ինչպէս այդպէս դործում են լուսաւորեալ անկախ և բախզաւոր աղջերի ունենորները, օրինակ Ամերիկայի, Անգլիայի, Գաղիայի, Խուսիայի հարուստները։ Եթէ բարեգործութեան նպատակը ունայն փառասիրութիւնը չի, այլ զթառատ սիրտ, մենք ներկայումս միայն և միայն մեր թշուառ աղջի համար պիտի մտածենք, որովհետեւնա՝ առաջինը ամենից դժբախտն է և երկրորդ՝ նա մեղ մօտիկ է, ինչպէս մօտիկ են մեր ճնողները, աղջականները։

Այս, մենք ունեցել ենք և շատ բարերարներ աղջային ասպարիզում. Լազարեաններ, Մուլարտ-Ռափայէլներ, Սանասարեան, Յովնաննեան, Աւետիք Ղուկասեան, Իսահակ Ժամհարեան, Թամիրեան, Խուսատեան և ալլն, իսկ կենդանիներից՝ Վ. Քանանեան Մանթաշեան, Եղբարք Ղուկասեաններ, Ժամհարեաններ, Տէլիք-Աղարեան, Ափրիկեան, Տէր-Գասպարեան Թումաննեաններ և ալլն։ Իսկ արտասահման Եղիպտոսում յալանի Նուբար փաշի որդին, Պօղոս փաշան, որը մեծ նուիրաբերութիւններ է անում իւր աղջի լուսաւորութեան ասպարիզում, բայց ոչ ոք մեր բարերարներից չի հասել այն մեծ ժողովրդականութեան, ինչպէս հոչակաւոր Լազարեան տոհմը, մանաւանդ Յովնաննեսը և Քրիստոփորը, որոնցից՝ առաջինը՝ իւր ժամանակին հայ աղջի համարեա պետն էր համարւում Մեծն Եկատերինէի ժամանակ։

Նոյնպիսի ժողովրդականութիւն ներկայումս ունի Բագրաբնակ հարուստ Թաղիեվը, որը այժմ ամբողջ թուրք աղջաբնակութեան մէջ ամենաաղջեցիկ անձնաւորութիւն է, որը մանաւանդ յալտնի եղաւ հայ-թրքական ընդհարման ժամանակ երբ ամեն տեղից նորան էին դիմում թէ իշխանութիւնը, թէ հոգեորականութիւնը և թէ թուրք ժողովուրդը, որը նորան և „Հայի“ ամի է կառում, ինչպէս հայերը «հալրիկ» հանդուցեալ կաթողիկոսին։ Եւ այդ հաջուն ծանաչում են թէ Տաճկաստանում, թէ Պարսկաստանում և թէ առհասարակ Մահամետական աշխարհում։

Ինչով է վաստակել այդ՝ թէ և անուսում, բայց բնական խելք ունեցող թուրք աղջասէրը։ Անվախ և առատօրէն աշակցելով իւր աղջի վերածնութեան, որի համար նա ստացել է ղեներալութիւն (ԴՅՈՒՏ. Ը. ԸՕԵՒԹ.։) նորերս և գիտէր ինչո՞ւ համար։ Նորա համար, որ նա, ինչպէս Կովկասի փոխարքան լիշում է իւր չնորհաւորական հեռազրի մէջ աշխատում է թուրք աղջի կուլտուրական զարգացման համար։ Թաղիեվը, ինչպէս յալտնի է, շրջապատել է իւրան թուրք ինտելիլիքէնցիալով։ Նա հրատարակում է, ի՛ միջի ալլոց, թէ ուուսերէն և թէ թուրքերէն լեզով թերթեր, օրինակ „Կասպի“, „Հէյաթ“ և ալլն։ Նա Հայ-թրքական ընդհարման ժամանակ, չնայած բազմաթիւ սպառնալիքների ամեն կողմից, չ'հեռացաւ իւր երկրից, ինչ որ կարելի էր՝ արաւ թէ խաղաղացնելու գործում և թէ ինքնապաշտպանութեան իւր

ազգի համար: Միով բանիւ նա մնաց՝ ալսպէս ասած՝ պատերազմի զաշոռւմ, պատրաստ, Եթէ հարկաւոր էր իւր անձը զոհելու իւր ազգի համար. փախուստ տալ այդ դէպքում իւր անձը փրկելու համար նա իրան համար անպատւաբեր էր համարում: Եւ նա այդ բոլորի համար ստացաւ երկուստէք վարձատրութիւն՝ զեներալութիւն իշխանութեան կողմանէ և անմահ „Հաջի ամի“ անուն ամբորդզ թուրք հասարակութեան մէջ:

Բայց միթէ մեզ մօտ չկայ ասալարէկ դորձելու և Թաղիելի նման ժողովրդականութիւն ստանալու: Միթէ մեզ մօտ պակաս են ունեոր անձինք, որոնք կարող էին անել նոյնը, ինչ որ անում է Թաղիելի: Կան երկու պայմանները ևս. միայն հարկաւոր է անվախ սիրտ, բարի ցանկութիւն և խկական դովելի փառասիրութիւն, ոչ թէ ունայն, անցողական: Կան մեզ մօտ՝ վերջապէս աւելի կարող՝ թէ նիւթականապէս և թէ մտաւորապէս՝ շատ անձնաւորութիւններ որոնց նիւթական կարողութիւնները ոչնչով պակաս չեն Թաղիելի ունեցածից: Մենք այժմ աւելի քան կարօտ ենք անմահ Յովհաննէս Լաղարեանի և Թաղիելի պէս անձնաւորութիւնների մէջ:

Մեր ազգի ապագան՝ թէ Ռուսաստանում և թէ Տաճկաստանում և թէ Պարսկաստանում կախւած է նորանից, թէ ինչպէս կվերաբերւեն նորան մէր ունեօրները և խկական հայ ինաւելիքենցիան, ոչ թէ լոկ անունով աւելի վնասակար իւր ինքնա-

բերաբար օտարացմամբ թէ մայրենի լեզւի և թէ ազգային պարտաճանաչութեան վերաբերմամբ: Այդ երկու սիժերի միացմամբ միայն կարնլի է մեր ազգը աղատել աղքատութեան և խորին տգիտութեան ճիրաններից, գաղթականութեան և պանդխտութեան ազգաշինչ մեծ ախտից, որը վերչերս մեծ ժաւալ է ստացել: Այս, այժմ մեզ մօտ աւելի քան „հունձը“ շատ մեծ է, և գիտակից „հնձողների“ մէջ ահազին կարեւորութիւն կայ: Ամեն ազգի պատմութեան և կեանքի մէջ պատահում են և պատահել են յաջող ըոպէներ և եթէ գտնւել են խելօր և հեռատես անձնաւորութիւններ՝ իւր ժամանակին „օգտւել“ այդ պատեհ բոպէներից՝ չինացելով ոչ միշոց և ոչ կեանք, — աղդի գոյութեանը յաջող ընթացք է տրւել. այլապէս վերջինը չարաչար վնասւել է: Մենք այժմ շատ անյաջող պայմանների մէջ ենք գտնւում. սպառնում է մեզ կորուսա՝ մանաւանդ Տաճկաստանում, պանդխտութիւն մէր երկրում. հարկաւոր է դրաւել մեզ համար կարեւոր տէրութիւնների համակրութիւնը, մասնաւանդ Ռուսաստանի և Անգլիայի: Վերջապէս, հարկաւոր է, որ մեր փոքրաթիւ ազդի մէջ ստեղծարկաւոր է, որ մեր փոքրաթիւ ազդի մէջ ստեղծարկաւոր է, որ նա անի և բազմանալ, ծւի յաջող պայմաններ, որ նա անի և բազմանալ, ինչպէս խորհուրդ է տալիս մէր ազդի սրտացաւ և անկեղծ բարեկամը՝ հայկաբանութեան յախոնի պրոֆեսոր Մարրը. պիտի բաղմանալ Il faut se multiplier, որը այնքան խորիմաստ միտք է պարունակում:

Ես յաճախ եմ մտաբերում՝ թէ պըսփ. Մարրի

այդ խորհուրդը և թէ կովկասի ներկայ փռխարքայ Վորոնցով-Դաշկովի լետագայ խօսքերը հայ ներկայացուցիչներին, որոնք գնացել էին առաջնորդի լետ Մանիքեստը շնորհաւորելու: Հայոց ազգին ձեռնտու չէ գնալ ընդգէմ ուսւ կառավարութեան — Արմանսկому народу не выгодно идти противъ русскаго правительства; շատ խորհրդաւոր և նախազգուշացուցիչ խօսքեր մեղ համար:

V.

Մնում է մէկ հարց ևս, թէ հայր ներկայ Ռուսաստանի ազատազրական գործում ո՞ր կուսակցութեան պիտի լարի: Նա, 'ի նկատի ունենալով մեր ազգային շատ անլաշող պայմանները ամենուրէք և տեսնելով, թէ ինչպիսի մտաւոր ոյժեր են գործում այս ինչ կամ այն ինչ կուսակցութիւններում և ինչ ծրագրով, մեր համեստ կարծիքով, պիտի իւր իղձերը տեսնէ իրազորդւած «Կաղետական կուսակցութեան» միջոցաւ, ինչպէս վարւում են լեհական ազգային մեծ կուսակցութիւնը, մահմեղականները և հրէաները: Մենք առիթ ունեցանք ներկայ գտնւելու այն նիստին, որ խօսեցին Միկլիկովը և Բօդիչեվը. վերջինս իւր նշանաւոր ճառի մէջ յօդուտ ընդհանուր հաւասարութեան, բոլոր ցեղերի և 'ի մասնաւորի լեհացոց, սաստիկ տաքանալուց թոյլ տուեց իրան վիրաւորել ներկայ գտնւող նախարարապեա Ստոլիպինին: Եւ այդ եղաւ պատճառ սաստիկ աղմուկի

և Բողիչեվի շատ խիստ պատժման: Ի՞նչպիսի պաշտպաններ են հարկաւոր ալլազգիներին սոցանից աւելի գորեղ և ազդեցիկ . . .

Մնում է հային խաղաղ կուլտուրական ճանապարհով յառաջ ընթանալ, քանի որ այժմ արդէն կովկազում ունի իրաւունք այդ անելու: Ընտրել աւելի ծալքայեղ ճանապարհ — յեղափոխական, նշանակում է գնալ ընդգէմ հանդուցեալ հայրիկի հետեւալ մարդարեական խօսքերին մեծ կոտորածներից առաջ, որոնք պ. Խ. Ազատ բերել էր իւր լիշողութեան մէջ «Մշակում»: — «Մենք շատ պղտիկ ազդ ենք, վախենում եմ տակին բան չի մնալ»:

Զենք կարող ալստեղ չշեշտել, որ մեր ժողովրդի համար կենսական պահանջ է ներկալումս չորսամեայ դասընթացով դիւլատնտեսական ուսուցչանոց վաղարշապատում ի լիշատակ հանդուցեալ Մեծ Ծերունի հայրիկի, որը և լինի «Հալքիկիան Փոնդ»-ի իրականացումն, ինչպէս առաջարկեց մեր մամուլն:

Մենք կարծում ենք, որ մեզ անհրաժեշտ է նաև չորսամեայ դասընթացով տեխնիքական մի ուսուցչանոց մեր հայաբնակ գաւ առներից մէկում, որը նոյնպէս մեծ օգուտ կըրերէր:

Հայերս միայն լաւ թաղել գիտենք. ի՞նչ համերաշխութիւն և միութիւն էր բոլոր դասակարգերի. գոնէ այս երկու մասնագիտական ուսուցչագերի. գոնէ այս երկու մասնագիտական ուսուցչանոյները աշխատենք իրականացնել մեր օրերում:

Գանգատաներ են լսւում, թէ ինտելիգենտ ոյժեր չկան զիւղում. թոշակներ յատկացնենք միայն նրանց, որոնց վերաբերմամբ փստահ կարող ենք լինել, թէ նրանք կը դնան զիւղ, որպէս բժիշկ, ուսուցիչ և բահանայ:

Բ. Ա.

Ա. Պետրովորդ
25 դեկտեմբեր



Բ. Ա. թակութիւնների Աշխատանքներ

- | | | |
|---|----|----|
| 1. Առաջին օդնութիւն մինչև բժշկի գալլ (սպառ.) | 5 | կ. |
| 2. Վարակիչ հիւանդութիւններ | 5 | » |
| 3. Ինչ է սիֆիլիսը | 5 | » |
| 4. Առողջապահական զրոյցներ | 5 | » |
| 5. Ինչ է ժուժկալութիւնը | 5 | » |
| 6. Ինչ է անառակութիւնը | 5 | » |
| 7. Աներական ախտեր | 5 | » |
| 8. Աշակերտի առողջապահութիւն. | 2 | » |
| 9. Մեր նեարդերը | 10 | » |
| 10. Սիֆիլիս (բարեփոխուած) | 10 | » |
| 11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ | 10 | » |
| 12. Գեղձախտ (զօլոտուխտ) | 10 | » |
| 13. Ուլ է յանցաւորը | 15 | » |
| 14. Կարիք և բարեգործութիւն | 15 | » |
| 15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն | 15 | » |
| 16. Մանկավարժական համառա զրոյցներ | 15 | » |
| 17. Մարմամարդութիւն (25 պատկերով) | 20 | » |
| 18. Առողջապահական նուէր նորատի կանանց | 20 | » |
| 19. Կինը և տղամարդը | 15 | » |
| 20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա | 5 | » |
| 21. Ինչ է կաշու հիւանդութիւնը. | 15 | » |
| 22. Երիտասարդութիւն և ծերութիւն. | 15 | » |
| 23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին. | 20 | » |
| 24. Ուղեղի սիֆիլիսը (դիսի և ողնաշարի) | 20 | » |
| 25. Մտամոքսի կատարը | 25 | » |
| 26. Քուն և երազ (մի պատկերով) | 25 | » |
| Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին | 10 | » |
| 27. Գործարան թէ երկրագործութիւն. | 15 | » |
| 28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն | 20 | » |
| 29. Մտերմական նորհգ. պատանիներին (օնանիզմ) | 20 | » |
| 30. Գյուղաբեան կոիւ | 20 | » |
| 31. Խուզայլի Վիրխով | 25 | » |
| 32. Սէր և խանդ (մի պատկերով) | 20 | » |
| 33. Անառակութիւն և պոռնկութիւն | 20 | » |
| 34. Նուէր հայ զինորին | 20 | » |
| 35. Նուէր հայ վարժապետին (գպրոցական առողջապահութիւն) | 20 | » |
| 36. Նուէր հայ գպրոցականին (Մեր օրերը) | 10 | » |
| 37. Ութժամեսյ բանուորական օր (մի պատկ.) | 10 | » |
| 38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդացում և մահացութիւն) | 10 | » |
| 39. Զրոյցներ զիւղացու հետ (մամուլի տակ է) | 10 | » |
- Պահեստը գտնուած է Ա. Պետրովորդ, Պուտկինեան Արագատիս, 1, հշտուկով փող, տ. 4

ԴԻՆ Ե 10 ԿՈՊ.



16.497